



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

83-31

---

11-53


N/1826

~~Handwritten scribbles in red ink, including a diagonal line and some illegible characters.~~

Handwritten text at the bottom of the page, possibly a signature or date, written upside down.

~~Handwritten scribbles in black ink, including a diagonal line and some illegible characters.~~

1824



ՈՍՏԱՅՆԱՆԿ ԳՐԷՅՅԸ

ԵՒ

ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԸ


ՎԷՊ

Թարգ. Ա. Գ.

ԲԱԳՈՒ

Ն. ՄԱԼԱՑԷԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ.

1875



83-31

Ռ-53

48

ՈՍՏԱՅՆԱՆԿ ԳՐԷՅՖԸ

ԵՒ

ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԸ

ՎԷՊ

1001  
4562  
ԲԵՆԷԿԵՆԻ ԳՈՂՐՈՒՆԻՔԻ « Գրչեց Կո-  
նաչ և Լարգճմանոս »

Ա. Քալանթարեանցից

ԲԱԳՈՒ

Ն. ՄԱԼԱՖԻԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ:



~~344~~

461-ԱՀ

Дозволено цензурою Троицкь 12-го  
Августа 1874 года.



1

**ՈՍՏԱՅՆԱՆԿ ԳՐԷՅՅԸ  
ԵՒ  
ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԸ  
I**

Այս ոստայնանկի բոլոր բնա-  
կարանը բաղկացած էր մի բաւա-  
կանին ընդարձակ, բայց խոնաւ և  
զազրայի սարդավիյ: Այդ սար-  
դավը, կամ աւելի լաւ ասել  
մառանը, մտնելու համար պէտք  
էր իջնել մի քանի աստիճաններ,  
որոնք բոլորովին քանդոտուած  
էին և հնացած, Սննեկի մէջը  
շատ մուխ էր, որովհետև լուսա-

մուտները փոքր էին և կայքրուած թղթով. իսկ մէկն էլ բոլորովին ցեխտուած էր, որովհետեւ նրանք հողի հաւասարութեամբ էին շինուած:

Պատերը ցածր էին, մոխրագոյն, և օճոռքը փուչացած: Կահ կարասիք չկար. աչքի ընկնումէր առաջին անգամից միայն մի ոստայնանկի — մեքենայ (դաղկեահ), մի ծուռ մահճակալ և մի հին աթոռ, որը թէ սեղանի և թէ աթոռի տեղ էր բռնուած: Մահճակալից բարձր

պատից կախուած էր աղքատ և պատռոտած հագուստ:

Մահճակալի վերայ փոխանակ բարձի գտնվումէր մի ծակ-ծակ տոպրակ լքցուած դարմանով: Նրա վերայ պառկած էր բարակացաւով հիւանդ, բայց դեռ մատաղահաս մի կին. նրա մօտը մի սփռնած, ուռած երկու տարեկան երեխայ: Իսկ միւս ծծի-երեխան պառկած էր մօր կուրծքին ծծերի մօտ: Ինչպէս մայրը, այնպէս և երեխայն ծածկուած էին մի մազե-

դէն վերարկուով:

Տարուայ ձմեռ եղանակն էր, խսկ սննեակը վառուած չէր. միմեանց սխմելով մայր ու երեխան աշխատումէին տաքացնել իրանց սառած անդամները և սրահպանուիլ մրսելուց:

Մեքենայի (դադկեահ) մօտ նստած էր մի սղամարդ և աշխատումէր սաստիկ եռանդով նա սփռնածէր, նրա թշերը ներս էին ընկած, և նա սաստիկ հազում էր: Ժամանակ ժամանակ նա յուսահատութեամբ մի հայ-

եացք էր գձում կնոջ վերայ, որ ցրտից ու քաղցածութիւնից թուլացած արդէն քնած էր, և յետոյ խեղճ մարդը էլ աւելի եռանդով սկսումէր շարունակել դործը, միայն երբեմն փոքր ինչ դադարումէր, որ ձեռքերը տաքացնի իւր շնչառու թեամբ: Այսպէս էր խեղճ ուստայնանկի և նրա ընտանիքի դրութիւնը, երբ սկսումենք մէք մեր պատմութիւնը:

Յանկարծ երեխան զարթնեց և խղճալի ձայնով ասաց հօրը.

— Հայրիկ, քաղցածեմ, հաց տուր մի-քիչ.

— Շուտով, սիրելի՛ զաւակս, տխրութեամբ պատասխանեց հայրը, սպասիր մի րոպէ էլ, ես գործս կ'վերջացնեմ, նրանից փող կ'ստանամ և քեզ համար հաց կ'առնեմ.

— Հայրիկ, դու երեկ էլ այսպէս ասացիր .... ես շատ քաղցած եմ շատ քաղցած, դէհ հայր'իկ:

Ոստայնանկի սիրտը քեչ էր մնացել պատռուի կտոր կտոր.. նա սկսեց աւելի սաստկութեամբ աշ-

խատել:

— Բարեկամ, ջուր տուր ինձ փոքր ինչ խմելու, ասաց այս րոպէին նրա կինը թոյլ ձայնով.

Ոստայնանկը վերկացաւ, որ գնայ կժի կռեից, բայց նա կտարուած էր, նրա կտորները ընկած էին մի անկիւնում և ջուրը թափուած էր զեանին ու սառած:

— Այս ո՞վ է կտորել կուժը, հարցրուց ոստայնանկը յուսահատ ձայնով:

— Ես եմ կտորել, հայրիկ, տ-

սաց մանուկը, — մայրիկը կժի մէջ  
երբեմն թացացնումէ Անտօնի  
համար հացի պինդ կտորները,  
երբ որ նա լաց է լինում: Ես  
երեկ տեսի, որ տակին հացի կը-  
տորներ են մնացել, ուզումէի  
ուտնել, շատ քաղցած էի, նրա  
համար կտորեցի:

Խեղճ ոստայնանկը դեռ ապ-  
շած կանգնած էր.

— Լեզուս խորովուեց, մի կաթիլ  
ջուր, Աստուծոյ սիրուն, հառա-  
ջեց հիւանդ կինը:

Ոստայնանկը ճարահատած

կտորատեց եղունգներով գետնից  
սառուցի կտորներ և տուաւ  
կնոջ, որ ազահու թեամբ խլեց  
նրա ձեռքից:

— Հայրիկ՝ ապա ինչո՞ւ չ'ես աշ-  
խատում, ասաց մանուկը, այդ-  
պիսով շուտ չ'ես վերջացնիլ-ես  
շատ քաղցած եմ:

— Ախ, զօրաւոր Աստուած,  
կանչեց ոստայնանկը երկու ձեռ-  
քերով մաղերը բռնած: Ախ ար-  
դարադատ Աստուած, զօրացրու  
ինձ... եթէ չ'է ես խեղճ զաւակ-  
ներիս համար հաց կ'գողանամ:

—Սիրելիս, բարեկամս, մի գայ՝  
 թակղուել ճշաց հիւանդ կիներ:

Ոստայնանկը արդէն դռնից  
 ուզումէր դուրս գալ. բայց կնոջ  
 խօսքերը նրան կանգնացրին, նա  
 յետ դարձաւ և սխտեց կրկին աշ-  
 խատել արտասուենքներ թափե-  
 լով:

—Ախ եթէ բանտում լինէի, ա-  
 լելի տաք ու կուշտ կ'լինէի ...  
 բայց ընտանիքս, կինս, զաւակ-  
 ներս—անի ով Աստուած.....

*~~~~~*

## II

Մի կին բաւականին հարուստ  
 հաղնուած Աւզուստա անունով  
 մտնումէր մի վաշխառու հրէ-  
 այի կրպակ, բաւականին հար-  
 կաւոր զործերի համար: Այդ  
 կինը ինքն աղքատ էր. բայց նշա-  
 նուած էր մի հարուստ երիտա-  
 սարդի վերայ: Երիտասարդը նը-  
 բան ընտրել էր իւր ամուսին  
 նրա խոհեմութեան և մաքրու-  
 թեան համար:

Հրէայի կրպակը, ուրտեղ մլտ-  
 նումէր: Աւզուստան, բաժանու-

ւած էր երկու մաս: Պատերի մօտ  
 դրուած էին պահարաններ, որոնց  
 մէջ կային շատ գրաւ դրած  
 առարկաներ. շորեր, ձերմակեղէն-  
 ներ, ամաններ, զարդարանքներ,  
 դրեանք, զէնքեր, պատկերներ և  
 ուրիշ շատ բաներ, որոնք ա-  
 լանդ մնալով հրէայի մօտ նշա-  
 նակեալ վարձատրութեամբ կրը-  
 կին պէտք է յետ դարձնուէին  
 տերերին:

Գուրսը արդէն մութէր, վասն-  
 որոյ կրպակում վառվում էր  
 մի մութ կանթեղ, մի շշի մէջ

էլ դրուած էր մի մոմ ձրազի  
 փոխարէն:

Մտտարանի վերայ նստած էր  
 ինքը հրէայ վաշխառուն Աբրա-  
 համ անունով, վոքր հասա-  
 կով, լղար մի մարդ: Նրա զըլ-  
 խին կար մի սև դդակ. խակ աչ-  
 քերին մի կանաչ ակնոյ, որ իւր  
 մեծութեամբ ծածկում էր նրա  
 դեղին երեսի մեծ մասը:

Սա խօսում էր մի բարձր, լղար  
 և սիւնած մարդու հետ, որ  
 նրան դրաւ էր տալիս երկու-  
 կարժ (վելա МОТОРЪ) թէլ:

—Ազնի դուք 5 մանէթ էք ուղուում, բղաւումէր հրէան, — ազնի երկուսը ցէք կամենում, աւելի ցեմ տայ...

—Ախր երկու մանէթ քիչէ, յուսահատութեամբ պատասխանեց լղար մարդը, տուէք զօնէ չորսը, թէլը 10 մանէթից աւելի արժէ:

—Ազնի ինց էք դուք ասում... բայց եթէ ցլծարէք, այն զամանակ ես ինց անեմ ազնի ասուցէք խնդրեմ, . . . Այն զամանակ ես ձեր թելը պէտքէ ոցինց զնով ծախեմ . . . ես էլ աղ-

քատ մարդ էմ, խղճացէք ինձ էլ . . . . ցէ, ցորսը ցեմ տալ:

Անծանօթը տխուր կերպով նայումէր թելի վերայ: Հրէայի փոքր և խորամանկ աչքերը ակնոցների տակից նայումէին նրա վերայ:

—Աստուած իմ, կանչեց խեղճը — ինձ փող է հարկաւոր, շատ հարկաւոր է . . . . տուէք ինձ զօնէ 3 մանէթ: Ախ, եթէ իմանայէք դուք ես ինչ եմ արել իմ կնկաս ու երկխայոց քաղցածութիւնից մեռնելուց ազատելու

Համար, դուք այդպէս երկայն  
չ'էիք ինձ ներդացնիլ: Դուք  
լաւ զիտէք ինքներդ այս թելի  
խսկական զինը:

— Էը, քո ասածը լինի, ասաց  
հրէան առնելով խեղճի ձեռ-  
նից թելը, դուք սարղեցիք իմ  
սիրտը ձեր տխուր խոսքերով.....  
ես էլ մարդեմ, էնդուր ցեմ  
ուղում ձեզ վիրաւորել: Ազի  
ես ձեզ կ'տամ էրկու մանէթ  
ու կէս: Սա, ազի, վերցի խոս-  
քըն է... եթէ կամենումէք ասա-  
ցէք եթէ ցէ-զնաք բարեաւ, ես

զամանակ ցունիմ:

— Ախ, Աստուած իմ Աստուած  
իմ ես էլ ժամանակ չ'ունիմ....  
դէհ շուտով տուէք փողերը....

Հրէան շուտով մի երկա-  
թի նշան կպցրուց թելերին և  
դրաւ պահարանում. յետոյ  
Համարեց փողերը և տուաւ  
անձանօթին:

Խեղճը նայեց նրա վերաւ  
զարմացմամբ և հարցրուց.

— Իսկ միւս փողերը:  
— Աւելի ց'կայ, պատարխանեց  
հրէան: 7/31 1922



— Դուք կամենումէք ասիւր ինձ  
երկու մանէթ ու կէս տալ:

— Դէ, էլ, ինց ես ասում, այդ  
պէս է էլի, վեց ամիս զամանա-  
կուայ կ'գայ սահ մէկ մանէթ  
մէկ արասի ու մէկ սահի: Ազի  
էդպէս ցէ, խնդրէմ ասացէք:

— Ինչպէս, բարկութեամբ բղա-  
ւեց խեղճը, 6 ամիս ժամանա-  
կում 100 տոկոս և այն էլ  
զլիսից էք դուրս գալիս:

— Ինց էք դուք բղաւում,  
սառնասրտութեամբ հարցրաւ  
հրէան, ազի ցէք ուզում, վեր-

առէք ձեր թելը յետ: Ես  
թէ, և աղքատ, բայց ծամարիտ  
մարդ եմ: Լաւ, եթէ ցեցը ուտի  
ձեր թելերը այն զամանակ ովէ  
պատասխանատու, դուք թէ ես..  
Ի հարկէ դուք, որովհետեւ ես  
մեղաւոր չեմ, եթէ ցեցը ու-  
տի, բղաւեց հրէան. իսկ վո-  
ղի և գողութեան համար ես  
եմ պատասխանատու... խնդրեմ  
ասացէք... և էլ եմ ուզում  
հաց ուտել. ու ձրի ոցինց ցեմ  
ուզում տայ: Ազի ուզումէք  
թէ ցէ. ասացէք:

Մահվան դունատութիւն  
 ծածկեց խեղճ անծանօթի երեսը:  
 — Փողերը տուր այստեղ, անի-  
 ծեալ ջհուդ, բղաւեց նա որո-  
 տաձայն: Իսկ հրէան հանգիստ-  
 ու հանդարտ մօտիկացաւ սե-  
 ղանին, գրիւր թաթախեց մի  
 փոքրիկ աղտոտ թանաքամանի  
 մէջ գրեց և գրաւականի ձե-  
 ուացազիրը:  
 — Ինցպէսէ ձեր անունը, ազն,  
 հարցրուց հրէան:  
 — Ոստայնանկ Գրէյֆ կամաց  
 ձայնով պատասխանեց խեղճը:

Աւզուստան բոլոր այս ժամա-  
 նակս մի անկիւնում կանգնած  
 էր, վախենալով որ իբան ճա-  
 նաչնու Նորան սաստիկ շարժեց  
 այս տխուր տեսարանը: Խեղճի  
 ձայնը նրան ծանօթ էր երևում  
 բայց նա այնու ամենայնիւ  
 չկարողացաւ մտաբերել թէ  
 երբ ու ուր է տեսել նրան.  
 Բայց լսելով նրա անունը խ-  
 կոյն միտքը եկաւ, որ նա մի  
 ժամանակ ծանօթ էր նրա ծը-  
 նողներին հետ և շատ անգամ  
 նրան տեսել է դործարաններում:

Ոստայնանկը խոր հառա-  
ջանքով ստացաւ փողերը և  
զրաւականը: Կա շուռ եկաւ և  
յուսահատութեամբ ծափ տո-  
ւեց: Այս վերջի բանը արդէն  
բոլորովին շարժեց Ավգուստայի  
սիրտը. նա իսկոյն մօտեցաւ  
նրան և հարցրուց:

— Ճանաչու՞մէ՞ք՞ դուք ինձ...  
միթէ՞ ձեր դրութիւնը այդպէս  
վատ է:

Ոստայնանկը նայեց Աւ-  
գուստայի վերայ և ճակատը  
սկսեց շփել, իբր թէ չ'հասկա-

նալով նրա ասած խօսքերը:  
— Միթէ՞ ճշմարիտ դուք չ'էք  
մտաբերում Ավգուստային:  
Դուք ծանօթ էիք իմ ծնողնե-  
րի հետ:

Ոստայնանկը դեռ շփումէր  
ճակատը, յետոյ ասաց յան-  
կարծակի:

— Թողէ՛ք, ինձ մի պահէ՛ք  
խնդրեմ. եթէ ես մի քանի  
րոպէ յետանամ, կ'ինս և երե-  
խայքս քաղցածութիւնից կ'ը-  
մեռնեն:

Այս ասելով նա սանդուխք-

ներով վալեց տուն, կարծես խե-  
լադարուած:

Աւգուստան կարեկցու թեամբ  
նայումէր նրա ետեկց: Միայն  
թշուառութիւն քաշողը լաւ կը  
հասկանայ խեղճի ծածուկ վիշտը,  
ցաւը. վասնորոյ Աւգուստան շու-  
տով հասկացաւ, որ թէլը չի  
պատկանում ոտայնանկին. այլ  
երևի տուած էր նրան զործելու  
մի զործարանապետ:

Նա վախնում էր այդ զործի  
վատ հեռանքներէց, վասնորոյ  
մտքումը դրաւ հրէայից առնել

այդ դրաւը ու դարձնել ոտայն-  
նանկին:

Բայց վաշխառուն չէր հա-  
մաձայնվում, որովհետև ոտայն-  
նանկին ձեռացադիր էր տուած.  
որով նա կարող էր յետ պահան-  
ջել:

Փոքր ինչ մտածելով Աւգուս-  
տան վճռեց այս բանը թողնել  
մի ուրիշ օրուայ, աւելի յարմար  
միջոցի և իւր զործերը վերջաց-  
նելով հրէայի հետ, դուրս գնաց:



## III

Մեք արդէն գիտենք, որ խեղճ ոստայնանկ Գրէյֆը զրաւ էր գրել դործարանապետի տուած թեւը, որ իւր ընտանիքը ազատի սովի մահից: Նրա խիղճը սատարիկ նրան տանջում էր ամենայն մի թեթեւ ձայնից նա. դողում էր: Խեղճը գիշեր-ցերեկ նստած աշխատումէր, որ կարողանայ այնքան փող ստանալ, որ կարողանայ զրաւը յետ առնել և նրանով ազատուի ամօթից ու պատժից: Եթէ նրա արածը

պատահաբար յայտնուէր, խեղճ ոստայնանկը կորած էր:

Առաւօտը դեռ շատ վաղ էր: Ռատայնանկը բոլոր գիշերը նըստած էր մեքենայի մօտ աշխատումէր. առաւօտեան դէմ նա այնքան դադրածէր, որ մանածը ձեռքին գլուխը յածացաւ կուրծքի վերայ և մտաւ միծանր և անհանգիստ քնի մէջ:

Նրա հիւտնդ կինը պառկած էր մահճակալի վերայ. նրա շրնչառութիւնը անհաւասար էր և ծանր: Նրա մօտ պառկած էր

ծծի երեխան, ոսնների մօտ  
մանուկը և քուրձի տակ աղ-  
ջիկը:

Լուսացաւ: Ոստայնանկը քը-  
նած էր դեռ կանթեղը չհանգ-  
ցրած, ինչպէս երևում էր սաս-  
տիկ ու սարսափելի երազ էր  
տեսնում, խոր հառաջանք և  
խօսքեր էր երբեմն դուրս գալիս: .  
— Ինչպիսիք ինձ բղավում էր նա  
կցկտուր ձայնով— դժացէք.....  
կինս, որդիներս, զաւակներս,  
քաղցածութիւն, արիւն. . . ով  
Աստուած:

— Յակովբ, Յակովբ. հանգստա-  
ցիր, թոյլ ձայնով ասաց կինը  
այդ ինչէքեզ հետ. դու քնած  
ես:

— Արիւն . . . արիւն . . . շա-  
րունակում էր խեղճը բղաւել:

— Աստուծոյ սիրուն զարթնիր,  
Յակովբ, կինը կանչեց պինդ ձայ-  
նով, այնպէս որ իսկոյն սկսեց  
հաղել:

Ոստայնանկը զարթնեց, նա-  
յեց շուտով չորս կողմը, սաստիկ  
ախ քաշեց և կամաց ասաց.

— Փառք Աստուծոյ, սա միայն

երազ էր: Ինձ երևում էր, իբր թէ  
զործարանապետը կամենում էր  
ինձ դատաստան դնել թելի հա-  
մար և ես սպանեցի նրան:

— Սիրելիս, դու չափազանց շատ  
ես աշխատում. . . հը—ինչ կա-  
նենք մեք, եթէ դու էլ հի-  
ւանդանաս:

— Ապա ինչ անեմ . . . ախ  
սարսափելի երազ . . . սա երևի  
նրանից է, որ ես ձեռքերս ու-  
զում էի մխել արևնի . . . և  
հիմակ էլ դեռ թելի վերայ մը-  
նացած են արևան հետքերը. . .

— Ես էլ սարսափելի երազ էի  
տեսնում, ասաց ոստայնանկի  
կինը, ինձ երևում էր, իբր թէ  
դազաղում պառկած եմ. . . Սար-  
սափելի երազ է. բայց եթէ  
ձշմարիտ լինէր, ես կ'ազատուէի  
չարչարանքներից:

— Այնու, ես ինչ եմ կարող անել  
առանց քեզ, ո՞վ պետք է հո-  
գայ այն ժամանակ զաւակներիս  
վերայ, տան վերայ . . . .

— Լաւ, մի թէ՛ ես հիւանդ կա-  
րող եմ հոգալ տան վերայ. . . . Եւ  
բացի դա ուր է՞ տունը:

— Դու կ'առողջանաս, Աստուած ողորմած է . . . Ախ ես շատ քնեւի դործս դեռ վերջացած չէ . . . ես չ'եմ գիտում, ուրանդեց կարողեմ այսօր մի կտոր հաց գտնել . . .

Վերջի խօսքերը չ'լսուեցին, որովհետեւ մեքենան կրկին սկսեալ շարժուելու և ոստայնանկը սկսաւ աշխատել:

— Էյ, Աննա բղաւեց նա մի փոքր լռութիւնից յետ:

— Մի՛ զարթնացնիր՛, ասաց կիներ, նա երևի ամբողջ օրը աշխա-

տել է և երեկոյեան ուշ պառկեց քնելու:

— Սուտ է, պատասխանեց ոստայնանկը ստիպմամբ սառնասրտութեամբ. ես ամենեւին չ'եմ պառկել . . . ես մենակ ամենը չ'եմ կարող անել . . . ինձ լար չ'ունիմ. էյ, Աննա վերկաց:

Աղջկը վերթռաւ և սկսեց ուղղեցնել թմրած անդամները:

— Կէհ շուտ, քրթմնջաց հայրը, եկ այստեղ ծոյլ:

— Ծճմարիտ չէ, հայրիկ, կանչեց դարձնելով մանուկը, դու ինքդ

ևս ծոյլ: Ես փոքր ինչ առաջ  
զարթնեցի և տեսի, որ դու  
քնած ես:

— Հայրիկ, ասաց լացի ձայնով  
աղջկիւր, աչքերը շփելով, թող  
տուր մի ժամ էլ դեռ քնեմ: ...  
Իմ ձեռքերս երեկուանից ցա-  
ւուամեն:

Այս խօսքերը շարժեցին սաս-  
տիկ հօր սիրտը և նա ասաց  
քնքշու թեամբ.

— Զաւակ'ս, ևս շտապումեմ: ...  
Իսկ բոլոր լարերը դուրս են  
եկել. եթէ դու ինձ չ'օգնես, մէք

էլի կ'քաղցածանանք:

— Ե՛հ դու քնիր Աննա, ասաց  
յամառ մանուկը, աշխատիր, մի  
աշխատիլ — մէք հենց էլի քաղ-  
ցանուամենք:

— Ինչպէ՞ս քեզ ամօթ չ'է Անտօն,  
ասաց մայրը թոյլ ձայնով. միթէ՞  
քեզ հայրիկը չ'է՞ հաց տւողը:

— Տալիսէ. բայց քիչ:

Աղջկիւր կամաց-կամաց վեր-  
կացաւ:

— Ծ'հ ինչպէս ցուրտ է, ասաց նա  
մօտիկանալով հօրը . . . հայրիկ  
առաջ տուր ինձ փոքր ինչ ու-

տեմ, եթէ չէ ես չեմ կարող  
աշխատել:

Ոստայնանկը վերկացաւ և  
վեր առնելով պատուհանից կոշա-  
սև հացի մի կոոր մի փոքր կոտ-  
րեց և տուաւ խեղ ձ' աղ ջկան:  
Նա ազահութեամբ կերաւ լւր  
բաժինը և սկսեց աշխատել . .

## IV

Մի քանի ժամ շարունակ  
հայր ու աղջիկը աշխատումէին  
լուռ և առանց ձանձրանալու:  
Ժամը 10 ին մի մարդ դուռը

զարկեց: Փոստովիոնը մտաւ սե-  
նեակը ե. մի նամակ տուաւ:

— Նամակ, կանչեց ոստայնանկը  
վերկենալով տեղեցք. յետոյ նա-  
մակը ձեռներու մը շրջելով, նա  
ունքերը վերայ տուաւ և հար-  
ցուց.

— Ձեզ հարկաւոր է սրա համար  
մի զրօշ (երկու կօպէկ):

— Այո, պատասխանեց փոստովի-  
օնը:

— Ուրեմն ես կարողեմ նամա-  
կը ընդունել:

— Ձէք կարող . . . ուրեմն զրե-

ցէք, որ չէք ընդունում:

— Ես ո՛չ գրիչ ունիմ, ո՛չ թանաքաման . . .

— Վաս է . . .

— Սիրելիս, ընդունիր նամակը, ասաց կինը, կարելի է նրանով է մեր բաղդը . . . : Սրանից էլ թշուառ էլ ոչինչ չեկարող լինել:

Ոստայնանկը լուռ շարժեց գլուխը և գնաց կնոջ մահճակալի մօտ: Գօշակի տակից հանեց նա մի շոր, որի մէջ ծածկուած էին մի քանի պղնձէ փողեր, որոնցով պէտքէ գրաւը յետ առ-

նուէր, և մի գրօշ տուաւ փոստալիօնին:

— Մի գրօշ էլ պակասեց, ասաց ոստայնանկը, մօտիկանալով լուսամուտին և բանալով նամակը, բայց ով դիտէ, կարելի է նրա մէջ զանազան լաւ համբաւներ էին:

Նա սկսեց կարդալ: «15 մարտի 18 . . . »

«Եթէ ոստայնանկ Յակովբ Գրէյֆը այսօր ժամը մէկին չի բերիլ նրան տուած թելը շինած թէ չ'ընած, նրա վերան գան-

դաս է առաջարկուելու պօլի-  
ցիին:

«Գօտֆրիդ Ստենդալ և Ընկ.»

Ոստայնանկը սկսեց կարդալ  
պինդ ձայնով. բայց երկրորդ  
շարքում նրա ձայնը կտրուեց...  
Շուտով կարդաց մինչև վերջ,  
կսկրծանքով ձեռները բաց թո-  
ղաւ և նամակը ընկաւ գետին:

Նա կանգնած էր, կարծես  
որոտմունքից սարսած էր... Բոլոր  
նրա ջանքը զուր դուրս եկան...  
զուր էր նա աշխատում, զուր  
էր քաղցած մնում... ամօթանքը

մեծ — մեծ քայլերով մօտիկա-  
նումէր:

Յանկարծ մի սարսափելի ձայն  
դուրս եկաւ նրանից և սաս-  
տիկ շփոթուած ընկաւ նա ա-  
թռի վերայ:

— Ի՞նչ եղաւ քեզ, ասա՛, Աս-  
տուծոյ սիրուն, բղաւեց կինը  
բարձրանալով անկողինքի վերայ:

Մահուան գունատութիւն  
ծածկեց խեղձի երեսը. նրա աչ-  
քերը փակուեցան . . .

— Մայրիկ — հայրիկը, մեռնումէ  
կանչեց ազ ջիկը և վերթուշելով

տեղիցը ընկաւ ծուռնկերի վերայ  
հօր ոտների մօտ

— Հայրիկ մի մեռնիլ, բղաւնց  
փոքրիկ Անտօնը:

Ժողովելով վերջին ոյժը հիւ  
ւանդ կինը անկողնից դուրս  
թռաւ, բայց սենեկի մէջ տե-  
ղում ոյժից ընկաւ և նա յուշա-  
թափուկն խոնաւ գետնի վերայ.  
Երախայքը միասին բղաւնցին,  
որով հայրը ուշքի եկաւ:

Վայրենի կերպով վերկացաւ  
նա իւր տեղից, նայեց շուրջը.  
նրա աչքերը ընկան կնոջ վե-

րայ և նա յուսահատ ձայնով  
ասաց:

— Աստուած տայ, որ նա մեռնի  
նա չարչարանքներից կ'ազատուի.

Դժուարութեամբ բարձրացրաւ  
նա անզգայ կնոջը և դրաւ ան-  
կողնի մէջ: Յետոյ հանելով գոր-  
զի (խալչի) տակից բոլոր ժո-  
ղոված փողերը և գդակը դնելով,  
դուրս թռաւ փողոց, ուշք չ'ը-  
դարցնելով երեսայոց վերայ: Գրէյ-  
Ֆը գնումէր վաշխառու հրէայ  
Աբրահամի մօտ:

Խեղդուողը մի դարմանիցն էլ

է բռնու՛մ, որ ազատութիւն  
դանի:

Գրէ յՅը յուսով էր, որ հրէան  
կ'ազայ նրա վերայ և կ'տայ  
նրան մանած թելը, այն պայ-  
մանով, որ մնացած կէս մանէ-  
թը յետոյ վճարի:

## V

Վաշխառու Աբրահամը նե-  
ղացած էր. նրան խարելէր մի  
փողոցի աղայ մինչև մէկ մանէթ:  
Աբրահամը, որ ինքն էր առհա-  
սարակ խարում ուրիշներին, կամ

կողոպտում խղճուկներին, այժմ  
սաստիկ զանգաովումէր մարդ-  
կանց չարութեան և ցածրու-  
թեան վերայ և երդուեց այնու-  
հետև ո՛չ մէկին չ'հաւատալ, թէ  
և մինչև այն ժամանակ էլ ճշ-  
մարիտը ասած նա ո՛չ մէկին  
առանց դրաւի չ'էր տալիս.

Ուրեմն ոստայնանկը շատ ան-  
յարմար միջոցում էր եկել:

Ոստայնանկը աչքերը ար-  
տասունքներով լիքը աղաչում էր  
հրէաին տալ նրան մանածը և երդ-  
ւում էր, որ մինչև շաբաթ օրը

անպատճառ կտայ նրան պահանորդ կէս մանէթ:

Հրէան լսումէր նրան սառնասրտութեամբ և հանդարտութեամբ քթախոտ քաշելով երբ ոտայնանկը խօսքը վերջացրաւ հրէան ասաց.

— Էդ ինց նոր բան է՞, մանածը տալ, ազի սպասել մինցև սառաթ օրը:

— Օվայմիր— միթէ ինձ յիմարես գտել: Սաքաթօրը բերէք ինձ բոլոր փողերը այն զամանակ ես ձեզ կ'հաւատամ, այն զամանակ

մանածը կ'տամ: Ազի սա ինց բան է . . . . . Ես ոչ մէկին ցէմ հաւատում, ո'չ մէկին. բոլորը խաբրայ—էն. . միայն փողն է ծամարիտ խօսում. . . զնաք բարեաւ:

— Աստուծոյ սիրուն, խղճացէք ինձ վերայ, աղաչումէր ոտայնանկը, եթէ դուք զիտենայիք ես ինչ դրութեան մէջ եմ, այն ժաման. . . խղճացէ՛ք, դրթացէ՛ք ինձ վերայ:

— Յի կարելի, ցի կարելի, համառութեամբ պատասխանեց հը-

բէան, իմ գրքիս մէջ ցի գրուած զթութիւն... զթութիւնը իրա տեղում, իսկ զործէրը իրա տեղում... Նայեցէ՛ք, ահա այստեղ գրած է այս մարդիս տուած է այսքան, գրաւը այսքան... Ուրեմն ինցու՞ եմ ես գրում, եթէ գրաւը տալու եմ քեզ: Ոցինց ցէմ գրիլ—անկարգութիւն կ'լինի... Ազն բերէք կէս մանէթ էլ—ազն կարգին կ'լինի.....

—Ատուած իմ, Ատուած իմ, հառաջեց խղճուկը մասները

կոտրելով:

—Գիտէք ինց, ասաց հրէան—ես խղճումեմ ձեզ... լաւ մէկ սղորմութիւն էլ կ'անեմ յետոյ ուխտումեմ, որ...

Յուսոյ մի նշոյլ վայելց ոսոյս նանկի երեսին:

—Նս ձեզ կտամ ձեր մանածը, ասաց հրէան, եթէ դուք կ'ըրերէք մի ուրիշ գրաւ: Ըբ կարող էք թէ ցէ:

Ոսոյսնանկը յուսահատութեամբ ձեռքերը ցած թողեց:

—Ուրտեղեց՞ ես վեր առնեմ

ուրիշ գրաւ. բղաւեց նա, մնացել է գրաւ Կենամ երեխայքս ու կինս:

— Ուրեմն ես օգնել ցեմ կարող, վերաբերեց վաշխառուն, ուսերը թափտալով: Դուք խեղճ մարդ էք, ես էլ եմ խեղճ մարդ, ձեզ ողինց ցունեք, ազի ես էլ ցունեմ:

Ուրեմն աւելի կռուել հարկաւոր ցէ. և գործը թողնենք այնպէս, ինցպէս որ կայ: Աղի ծամարիտ՝ ցեմ ասում:

— Վերջին անգամ աղաչումեմ

ձեզ Աստուծոյ անունով, ճշտումէր խեղճ ոստայնանկը, ընկնելով վաշխառուի ոտները:

— Աղաթեցէք խեղճ ընտանիքս ամօթից և բանտից... Մանածը իմը չէ, նա առել եմ ես գործարանապետից որ գործեմ... նա այժմ պահանջումէ ինձանից, զթաց...

— Գլուել է, բղաւեց հրէան վախութիւնից եւ գնալով: Ես ինց գործ ունիմ գործարանապետի հետ: Ազի առանց փողի ցեմ տալ... Դուս կորէք,

դուք երկիւղալի մարդ էք, եթէ  
ցէ ես կուղարկեմ պօղիցէյսկուն  
կանչելու... Յ վայ-մի:

Այս ասելով, Աբրահամը  
մտաւ միւս սննեակը և դուռը  
փակեց, բայց դռնի ծակով  
նայումէր, որ խեղձին ձեռքից  
չ'թողնի:

Ոստայնան կը վերկացաւ նրա  
երեսը սփռնած էր, աչքերը լե-  
քն կին ասելու թեամբ և յուսա-  
հատութեամբ: Հրէայի ծունկը  
ընկնել . . . այլքան ցածու-  
թիւն և նա այնպէս՝ վարուի:

նրա արիւնը խտնուած էր . . .  
նա կամենում էր վրէժխնդիր լե-  
նել. բայց մտաբերելով կենը և  
երկիւղալիքը. հասաւեց և դուրս  
եկաւ վաշխառուի կրպակից:

Սաստիկ յուսահատութիւն  
էր օիրում նրա վերայ, երբ նա  
տուն դարձաւ: Երակայոց ձայ-  
ները նրան ուշքի բերաւ:

— Ախ, հայրիկ, լաւ է որ դու  
եկիր, կանչեց աղջիկը. մտիկ  
արա՞տես մայրիկը ինչպէս սփռա-  
նած է . . . նայի՛ր, ինչպէս  
պինդ բռնած է փոքր եղբորը

. . . նա մեզ հետ էլ չի խօսում . . . :

Ոստայնաներ մօտեկացաւ կրնոջ մահճակալին և ձեռքը դրաւ կնկայ սրտին: Աինը ազատուել էր աշխարհի չարչարանքներից. . . նա մեռած էր:

## VI

Ոստայնանկի կնոջ երազը կատարուեց . . . նա մեռաւ . . . Բայց ծծի երեխան դեռ կպած էր անզգայ դիակին . . .

Անշարժ դէմքով նայումէր

ոստայնաներ մեռած ամուսնոյ վերայ . . . նա բոլոր անձով դողումէր նրա վերայ յանկարծ ցուրտ էր գալիս, յանկարծ տաք: Նա թշուառ էր և մի արտասուենք էլ չկար, որ նրան նեղութիւնները թեթեացներ: Մեքենայաբար ընկաւ նա հանգուցեալի անկողնի մօտ ծնկների վերայ, և սարսափելի կերպարանքով նայելով երեխայոց վերայ ստաց խոր ձայնով:  
— Խեղճ՝ զաւակներս . . . ձեզ էլ աւելի մայր չունիք:

Այս խոսքերից յետ նա մնաց  
անշարժ . . . վերջին հարո-  
ւածը, ամենասաստիկը և ամե-  
նասարսափելին լինելով բոլորովին  
յաղթեց նրան, նա խելագարուեց:  
Վաստիկ լուսթիւն էր փրում  
ոստայնանկի տանը: Արեւոյքը  
միմեանց սխմելով կանգնած էին,  
առանց շարժուելու և ակամայ  
երկիւզով նայումէին հօր ու  
մօր վերայ . . . Առաջինը կո-  
րել էր բարոյապէս, երկրորդը  
Ֆիլիկիապէս, այսինքն առաջինը  
խելագարուել էր, երկրորդը մե-

ռել:

Յանկարծ զուռը վարկեցին:  
Որովհետեւ պատասխանող չկար,  
վասնորոյ մի բուպէից յետ զու-  
ռը բացուեցաւ և սենեակը  
մտաւ մի մատաղահաս երիտա-  
սարդ: Ըաւ հագնուած և միա-  
միտ գէմքով:

—Այս տեղ է կենում ոստայ-  
նանկ Գրէյֆը, ասաց նա բա-  
րակ ձայնով:

Ոստայնանկը նայումէր խելա-  
ղարուած, կնիկն վերայ և  
չ'պատասխանեց:

— Եւ ուղարկուած եմ «Ստէնդայլ  
 և ընկ.» հաշուէսնեակից. իմա-  
 նայու պատրաստ է գործուածը,  
 ասաց մատաղահաս մարդը վար-  
 դաջրով օժած թաշկինակը դնե-  
 լով քթին, որ վատ հոտը  
 չ'զգայ:

Գործարանապետի անունը  
 լսելով ոտայնանկր ետ մտիկ  
 տուաւ: Նայելով փոքր ինչ դե-  
 ուհաս իմաստակի վերայ, նա  
 պինդ ձայնով և վայրենարար  
 ծիծաղեց:

Խեղճ անձանօթը վախեցաւ.

և խկոյն յետ դարձաւ ու դուրս  
 եկաւ: Տան առաջ կանգնած էր ~  
 Պարոն Ստէնդայլի կառքը: Գոր-  
 ծարանապետը ընկած էր վախուկ  
 բարձերի վերայ, որոնք ծածան-  
 վումէին անզղեական զսպանակ-  
 ների վերայ և ժպտալով ծխու-  
 մէր Հալաննայի սիգարա: Գեղե-  
 ցիկ ձիաները ոտները խփումէին  
 սառած դեանին:

— Հը ինչէ՞ Ս. յլ դօր՝, հարցրուց  
 գործարանապետը, երբ նրա  
 գործակատարը դուրս եկաւ ու-  
 տայնանկի տնից:

— Զարմանալի բան, Պարոն Սաէնդայլ. ոստայնանկը չողածէ հիւանդ կնկայ մահճակալի մօտ և փոխանակ պատասխանի ծիծաղեց: Նս սարսափեցի . . . ևս կարծումեմ նա խելաղարուածէ: — Հէնց, այդպէս էլ կ'լինի, ասաց դործարանապետը, խփելով զետին մի զեղեցիկ դաւազան ոսկէ ծայրով— ևս զխտեմ այդ անպիտաններին: Նս երևի մէջն է արեւ մանածը և մեզ անխորձ է համարում: Կրան խելաղարուած համարելով ուզումէ խա-

բել: Նս նրան կ'սովորեցնեմ. զնանք ինձ հետ միասին նրա սենեակը:

Պործակատարի օգնականու թեանը Պարոն Սաէնդայլը դուրս եկաւ կառքից և դաւազանին վերայ թեք ընկնելով զնայ ներս:

— Յուհ, — այս ինչ դարչահոտու թիւն է, ասաց նա իջնելով խոնաւ աստիճաններով մտնա նը: Յետոյ դռան մօտ կանդ առաւ ոսկեայ ծխախոտասուփից փոքր ինչ քթախոտ քաշեց և

ասաց զործակատարին. «բացէք դուռը»

Երկուսն էլ մտան մութ և խոնաւ մառանի մէջ:

Ոստայնանկը դեռ չողած էր և ուշագնաց նայում էր կնկայ գիակի վերայ: Անճանօթներին տեսնելով երախայքը մտան մահճակալի տակը:

— Գարեաւ քեզ Գրէյթի, ասաց զործարանապետը դռան մօտ կանգնած: Ոստայնանկը լռած էր չէր սպասասխանում:

— Է՛յ դու ծոյլ միթէ չես

չտում . . . ես հարցնումեմ, ուր է մանածը: Պատասխան չկար:

— Ա՛յ դու, անպիտան, բղաւեց զործարանապետը մօտիկանալով աւելի մօտիկ և բռնելով շորից. — Գո՛ղ, ասա՛, ինչ ես արել մանածը:

Երեխայքը վախութիւնից դողում էին:

— Դու ծախել ես, թէ խմելու ես տուել, արբեցո՛ղ, բղաւում էր զործարանապետը աւելի բարձր:

— Սուսս . . . մի բղաւէք —

կամաց պատասխանեց ուսուցիսն.  
կը--իմ կինը հէնց էս է որ քնեց  
. . . սուսս . . .

Այս խօսքերից յետ դործա-  
րանապետը նայեց մահճակալի  
վերայ և սարսափով ետ գնաց:  
Խեղճ հանգուցեալի դէմքը քա-  
շած չարչարանքներից բոլորովին  
այլակերպովել էր . . . :

—Օհ՛օ— քրթմնջեց Պարոն  
Ստէնդայլը գնալով դռնի մօտ  
—նա ճշմարիտ որ մեռած է....  
ին՛չ անսխտանու թիւն է: Գնանք  
Այլղօրֆ, ես չեմ կարողանում

համբերել այս հոտին . . . ճխա-  
խոտի տուփը ինչ եղաւ . . .  
՝ գնանք Այլղօրֆ, գնանք:

Երկուսն էլ խսկոյն հեռացան:  
Լուռ կերպով նրանք անցան  
սրահով բայց կռքի մօտ դոր-  
ծարանապետը կանգ առաւ և  
ասաց.

—Ան՛ ես մանածը բոլորովին  
մոռացայ նրան հարցնելու:  
—Դէ՛հ Այլղօրֆ գնացէք և  
ասացէք ուսուցիսնէին, որ ես նը-  
րան տալիս եմ երեք ժամ էլ ժա-  
մանակ . . . բայց եթէ նա այդ

Տիջոցումն էլ չ'ներկայացնի մա-  
նածը դործարանը, ես պօլիցիին  
խմաց կ'տամ:

— Պարոն՝ Ստէնդայլ—պատաս-  
խանեց Այլգորֆը խղճութեամբ,  
թողէք խղճուկին այդ մանածը  
— Երկու կարժ թէլը ձեզ չ'են  
սնանկացնիլ . . . նա առանց  
այն էլ սաստիկ դժբաղդ է:

— Ինչ, Այլգորֆ—լսեցէք, դուք  
ինձ մօտ ծառայումէք ո՛չ թէ  
ինձ խորհուրդներ տալու, այլ . . .  
Դուք գիտէք իմ կանոնները,  
ո՛չ մէկին ոտատեղ չ'տալ, եթէ

չ'է, այս աւազակները ինձ կ'ը-  
քանդեն: Գնացէք . . .

Գործակատարը դարձաւ մա-  
ռանը և կատարեց նրա հրա-  
մանը:

— Ինչ՞ բղաւեց ոստայնանկը և  
աչքերը բոցոտեցին—պօլիցիա՞ . . .  
Տժբախդ զաւակներիս զրկումէք՞  
իւրեանց հօրից . . . Ամօթանք  
խայտառակութիւն, իսկ ո՞վ կ'ը-  
թաղի իմ խեղճ կնոջս, իսկ ո՞վ  
կ'հոգայ զաւակներիս համար:  
Միթէ՞ նրանք էլ պէտք է քաղ-  
ցածութիւնից մեռնեն . . .

խղճացէք, զթացէք, ողորմեցէք  
 . . . : Ես կ'դարձնեմ մանածը,  
 ձշմարխոն եմ ասում կ'դարձնեմ:  
 բայց ոչ շուտ շաբաթ օրից . .  
 Ողորմեցէք . . . :

Գործակատարը ուսերը թափ  
 սուռաւ և հեռացաւ:

Մի բոպէից յետ գեղեցիկ  
 կառքը հեռացաւ ոստայնանկի  
 տնից:

Պարոն Ստէնդայլը գնաց  
 նախաձաշելու: Այդ օրը նրա  
 համար բերուած էին լաւ  
 ոստրէներ . . .

## VII

Ոստայնանկը քնաց մինակ —  
 իւր հանգուցեալ ամուսնոյ և  
 քաղցած զաւակների հետ: Նա  
 յուսահատ կանչումէր, հեկեկու-  
 մէր, կատաղաբար, . . . յան-  
 կարծ լռեց, նայեց չորս կողմը  
 վայրենական դէմքով և մեքե-  
 նաբար նստաւ աշխատելու կըր-  
 կին . . . Այդ ամենասաստիկ  
 և անյաղ թելի սովորութիւնը  
 յաղ թեց մինչև անգամ ամենա  
 զօրաւոր հողիկան վրդովմունք-  
 ներին:

Հասկանումէր նա արդե՞օք  
 ո՞ւմ կամ ինչո՞ւ համար էր  
 աշխատում . . . . Ի՛հարկէ ո՛չ  
 —որովհետեւ նա գիտէր, որ մի  
 քանի ժամից յետ պէտքէ բան-  
 տարկուէր պօլիցիից . . . : Նա  
 աշխատումէր առանց նպատակի  
 անզգայաբար, մոռացածէր բոլոր  
 աշխարհը, իւր դրութիւնը, իւր  
 ապագան և — աշխատումէր զար-  
 մանալի հանգստութեամբ , . .

Մառանի մէջ սաստիկ լռու-  
 թիւն տիրեց: Ստոյնանկի կըն-  
 կայ դիակը դեռ զորզի վերայ

ընկած էր առաջուայ դրու-  
 թեամբ երեխան զրկած իւր սա-  
 ռած կուրծքի վերայ:

Մանուկը և աղջիկը սխմած  
 էին միմիանց մահճակալի ետե-  
 ին և երկիւղով նայումէին կամ  
 հօր, կամ մօր վերայ:

Ոստայնանկը սառնասրտու-  
 թեամբ ետ բացեց մի քանի թե-  
 լեր և մեքենան շրխկշրխկաց և  
 շարժուեց կրկին . . .

Անխելք խղճուկը անհոգ  
 սկսեց երգել . . . :

Յանկարծ դուռը զարկեցին

— Օհօ, քրթմնջաց ոստայնանկը:  
 — Նրանք արդէն գալիս են իմ  
 յետակից: Ներս համեցէ՛ք. ա-  
 սաց ու շարունակեց երգել:  
 — Ներս համեցէ՛ք, կանչեց նա  
 բարձր ձայնով, տեսնելով որ ո՛չ  
 մէկը ներս չ'է մտնում նրա  
 հրաւերին:

Պուռը բացուեցաւ և մա-  
 ռանը մտաւ Նէյտենանա Շթէյն-  
 Ֆորտը և Աւզուտան: Աւզուտ-  
 տան պահած էր իւր ձեռքին  
 մանածը որ ոստայնանկը դրաւ  
 էր դրած հրէախմօտ:

Ոստայնանկը յետ նայեց, տե-  
 սաւ իւր մանածը և վերթռաւ:  
 Աչքերը փայլեցին, ուրախու-  
 թիւնը սփռուեց բոլոր զէմքի  
 վերայ և ընկնելով մատաղահաս  
 օրիորդի մօտ, խլեց նրա ձեռքե-  
 ռից. և կանչեց — Օհ-իմ մա-  
 նածս՛:

Պինդ սղմելով նրան իւր  
 երկու ձեռքերով, ոստայնանկը  
 երկայն ժամանակ նայում էր մա-  
 նածի վերայ . . . Անկարելի է  
 նկարագրել այն, ինչ որ այս բո-  
 պէին կատարվում էր նրա հո-

զւոյ մէջ:

— Իմ մանածը, կրկնեց նա հե-  
թեթալով ներքին ուրախու-  
թիւնից — ես ճշմարիտ մարդ եմ.  
Առէ՛ք — առէ՛ք բոլոր իմ փողե-  
րըս:

Այս խօսքերը ասելով նա  
հանեց զբազանից այնքան նեղու-  
թեամբ ժողոված փողերը և  
զրաւ Աւզուստայի առաջ աթո-  
սի վերայ:

— Ես ճշմարիտ մարդ եմ, կրկնեց  
նա և իբրև խելագար դուրս  
թռաւ սենեկից:

Այժմ մէք պէտք է բացա-  
տրենք ընթերցողներին, թէ ինչ  
կերպ Աւզուստան հասաւ խրդ-  
ձուկին օղնութեան:

Աւզուստայի ամուսին լէյտե-  
նանդ Շթէյնֆորտը, այդ օրը  
տարել էր նրան հիւրանոց. բայց  
զանազան պատճառներով նրանք  
աւելի չ'ուղեցան մնալ հիւրա-  
նոցում, ուրտեղ շատ օխտիւր էր  
նրանց համար:

Յետ դառնալով տուն Աւ-  
զուստան խկոյն մտաբերեց իւր  
պատահմունքը ուստայնանկի հետ

նա իւր մարդու հետ միասին  
իրենց սեպհական գործի համար  
գնաց հրէայի մօտ, որ յետոյ  
համողի և մարդուն ոստայնան-  
կին օգնելու:

Աշխատու Արրահամը շատ  
շատ ուրախացաւ նրանց լու-  
վարվեցողութեանը իւր հետ և  
ասաց:

—Ահա, մի տասը բոպէ սրա-  
նից արաց, եկաւ այստեղ մի ան-  
պիտանը—որ ինձ մօտ զրաւ էր  
դրած ուրիսի մանածը և ու-  
ղումէր, որ ես յետ դարցնեմ . . . :

Տուր հա տուր, ամա ինձ  
ստացաւ:

—Ախ, Աստուած իմ, ասաց յան-  
կարծ Աւգուստան մտաբերելով  
խղճուկին—դուք ոստայնանկ Գը-  
րէյի համարէ՞ք խօսում:

—Հրամներս—սատ անպիտան  
մարդ է—երկիւղալի մարդ:

Աւգուստան խօսոյն պատմեց  
բոլորը լեյտենանաին: Նրա պատ,  
մութիւնը սաստիկ շարժեց երի-  
տասարդի սիրտը նա խօսոյն ա-  
ռաւ զրաւը երկալատիկ փող  
տալով: Եւ յետոյ հրէայից իմա-

նալով. թէ ուր է կենում Գրէյ-  
ֆը, իսկոյն ուղեորուեցաւ այն  
տեղ Աւզուստայի հետ:

Շտէյնֆորտը նայեց առաջ  
փոքր ինչ ատելութեամբ: այս  
բանին, յետոյ նրա դէմքի վերայ  
մի սաստիկ կարեկցութիւն երևե-  
ցաւ:

Ինչպէս հարստութեան մէջ  
ասլրած երխտասարդ, նա չ'էր  
կարողանում երևակայել իրան  
ոստայնանկի նեղ զրութիւնը.  
նա զիտեր խղձութիւն բառը  
միայն—բայց երբ մտաւ ոստայ-

նանկի մառանը նա այն ժամա-  
նակ միայն հասկացաւ, տեսաւ  
ինչ է դա:

Նրա վերայ շատ մեծ ազ-  
դեցութիւն արին փոշիոտ, ազ-  
տոտ և ցեխոտած պատուհան-  
ները, որոնց միջով մտնումէր մի  
բարակ լոյս:

Սննկի յատակը կաւից էր,  
անկարգ. լէքը ծակծուկներով:  
Պատերը ցեխոտ և խոնաւու-  
թիւնից ծածկուած բորբոսով.  
Ծուռ մահճակալ, չ'կաին ա-  
թոռներ, դորդը պատռոտած և

նրա վերայ ընկած մի սփռնած  
ու կապոյտ գիակ. գիակի վե-  
րայ ծծի երեխայն, մահճակալի  
նաւին կապերանների մէջ հի-  
ւանդ երեխայքը . . :

— Աստուած իմ, ասաց վերջա-  
պէս Շիթէյնֆորթը կիսաձայն. —  
Միթէ այստեղ մարդիք ե՛ն ապ-  
րում . . . Ես այստեղ, ճշմա-  
րիտն եմ ասում, իմ ձիաներիս  
թոյլ չ'էն տալ:

— Այո, այստեղ մարդիկ են ապ-  
րում. և ցոյց տալով պատու-  
հանի վերայ սև ու կոշտ հացի

մի կտոր, աւելացրեց Աւզուստան  
— ահա նրանց միակ կերակուրը:  
— Այս տժբաղը կինը երևի  
քաղցածութիւնից է մեռել—  
ասաց Շիթէյնֆորթը մտկանա-  
լով անկողնիքին— բայց մէք մի  
ձաշի այնքան ենք վճարում,  
ինչքան այս ընտանիքը մի ամ-  
բողջ շաբաթուայ համար:

— Մինչև մի ամսուայ և 2  
ամսուայ— ասաց Աւզուստան և  
մտիկացաւ երեխայոց:

Խեղձերը այնպէս վաշրենի  
և վախկոտ էին, որ սարսափած

բղաւեցին . . . նրանց ձայնը  
զարթնեցրաւ ծծի-երեխային, նս-  
լաց եղաւ և սկսեց գլխովը  
պտուել մօր ծծերը:

—Օհ-սարսափ-կանչեց Շթէյն-  
Ֆորտը-Սիրելի Աւգուստա, վեր-  
առ երեխային դիակի վերայից:

Պժուարութեամբ կարողացան  
նրանք հանելու երեխային սրխ-  
մած գրկից: Յետոյ նրան դրին մի  
ուրիշ տեղ, ուր մի քանի բոպի  
կանչուտուելով, խեղճ արարածը  
քնեց թուլութիւնից և քաղցա-  
ծութիւնից

## VIII

Վարչապէս Գրէյֆը ստ դու-  
ձաւ և հեթեթալով ասաց.

—Այժմ ես կրկին ճշմարիտ  
մարդ եմ.—Փառք Աստուծոյ—  
պօլիցիան ինձ հետ ոչինչ գործ  
ունենալ կարող չ'է . . . Ոհ  
Աստուած իմ . . . չ'զիտեմ  
ինչպէս ձեզ յայտնեմ իմ շնոր-  
հակալութիւնս—աւելացրեց նա  
բռնելով Աւգուստայի ձեռքերը  
—Տէր Աստուածը կ'վարձատրի  
Ձեզ որովհետև դուք ինձ ազա-  
տեցիք խայտառակութիւնից :..

Գուք երևե ինքներդ հարուստ  
 չէք. բայց ես կ'վճարեմ: Վեր-  
 առէք այժմ այս փողերը . . .  
 վերջացրաւ այսպէս Գրէյֆը ար-  
 դէն խելքը զլուխը եկած:

— Սխալ վումէք, սիրելի Գրէյֆ,  
 պատասխանեց մատաղհաս օրի-  
 որդը — ո՛չ թէ ինձ, այլ այս պա-  
 րոնին էք զուք պարտական  
 ձեզ օգնականութեան համար:

— Ա՛հ — ներեցէ՛ք — ես մինչև ան-  
 դամ ձեզ պլուխ չտուի . . .  
 բայց առաջ երկիրդ, յանկարծա-  
 կի պատահմունք, իսկ այժմ

ուրախութիւն . . . ո՛հ շնոր-  
 հակալ եմ ձեզանից:

Այս ասելով նա բռնեց լեյ-  
 տնանախի ձեռքը, որ համբուրի  
 — Թողէ՛ք, Թողէ՛ք — ասաց Շթրէ  
 յնժորտը ձեռքդուրս հ անելով-  
 ես արդէն համոզուեցի, որ դուք  
 ճշմարիտ մարդ է՛ք: Սա մեծ է  
 ամենայն շնորհակալութիւնից . . .  
 Սաացէ՛ք ինձ աւելի լաւէ, ին-  
 չով է՛ք մտադիր դուք այժմ  
 ապրելու, կամ ինչէ՛ք անելու.  
 — Ին՛չ եմ անելու, պատասխա-  
 նեց ոստայնանկը, որի խելքը

կրկին գլուխը եկաւ բոլորովին մտաբերելով իւր խեղճ դբու-  
թիւնը — ես պէտք է աշխատեմ.  
խեղճ զաւակներիս կերակրելու  
համար . . . Բայց նախ ես  
պէտք է թաղեմ իմ հանդուցեալ  
ամուսնոյս . . . Կարծեմ, այն-  
պէս էլ կ'թաղեմ զաւակներիս  
մէկը միւսի ետեւից:


Ոստայնանկը վերջին խօսքե-  
րը ասաց անյոյս և ամենակրս-  
կծալի ձայնով. Շթէյնֆորտը  
սաստիկ շարժուեց և ասաց.  
— Լսեցէ՛ք ինձ այդքան չ'պէտ-

է յուսահատուիլ: Ես խօսեան-  
ուամեմ ձեզ օգնելու . . . : Տո-  
ւէ՛ք ինձ ձեր փողերը. ես նրանց  
պէտք է պահեմ, իրրև յիշա-  
տակ ճշմարիտ մի մարդու և  
նրանք քեզ մեծ բաղդաւորու-  
թիւն կբերեն: Բայց առաջին  
անգամի համար առէ՛ք 100  
մանէթ. թաղեցէ՛ք ձեր ամու-  
սինը, զաւակներիդ տուէ՛ք առ-  
աժամանակ մի տեղ և պտուեցէ՛ք  
աւելի լաւ բնակարան: Ահա այս  
օրիորդը ձեզ կ'օգնի ամենայն  
բանում: Երբ սր այդ բոլորը կ'կա

տարուի-եկէ՛ք իմ մօտ խօսելու  
թէ ինչ ով սէտք է սկսել պարա-  
պուել . . : Ահա և իմ հասցէն:

Ոստայնանկը սառեց մնաց:  
Նա նայումեր թէ փողերին, թէ  
լեյանտին թէ Աւզուստային:  
Ջերջիններս մինչև նրա ուշքի  
դալը դուրս եկան:

— Շնորհակալ եմ քեզից սիրելի  
Աւզուստայ-տաաց Շթէյն Ֆարտը  
մատաղահաս աղջկան, միայն  
ասյօր ես իմացայ ինչ է աղքա-  
տութիւնը և հաբստութեան  
նշանակութիւնը:




2013

2001

0015405  
0015398

« Ազգային գրադարան



NL0015405

« Ազգային գրադարան



NL0015398

